ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 71/30

ք.Երևան 14 սեպտեմբերի 2023թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության «վարչական տույժ նշանակելու մասին» 30.08.2023թ. թիվ 258 որոշման դեմ մաքսային ձևակերպումների մասնագետ Վարդուհի Քոլյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Մաքսային ձևակերպումների մասնագետ Վարդուհի Քոլյանը (այսուհետ նաև՝ բողոքաբեր) հայտնում է, որ սույն թվականի օգոստոսի 30-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունը ընդունել է «վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 258 որոշումը: Որոշման համար հիմք է հանդիսացել ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության 21.06.2023թ. «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» թիվ ԱԴՈ-23–000051 որոշումը, որով հաստատվել է, որ թիվ 05100011/220822/0035135 ապրանքների հայտարարագրով հայտարարագրված «Ինքնաթիռի փրկարարական սանդուղք P/N D30665-609, S/N A5966RP» նկարագրությամբ ապրանքատեսակը ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8807 30 000 ծածկագրի փոխարեն ենթակա է հայտարարագրման ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8907 10 000 0 ծածկագրով: Որոշումով Վարդուհի Քոլյանը զանցառու է ճանաչվել ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ:

Խնդրում է չեղարկել ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից կազմված «վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 258 որոշումը:

Բողոքաբերը ստորև նշել է, թե ինչու:

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը խախտում է սահմանում վերոգրյալ դրույթը. «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը»: Հայտնում է, որ թիվ

05100011/220822/0035135 ապրանքների հայտարարագիրը լրացվել է ճշգրիտ տեղեկություններով և ապրանքը նշվել է իր անունով:

2. ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության 21.06.2023թ. «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» թիվ ԱԴՈ-23-000051 որոշման մեջ չկա ոչ մի իրավական հիմք, թե ինչու պետք է ինքնաթիռի մաս հանդիսացող ԱՏԳԱԱ ծածկագիրը փոխարինել ջրի վրա շարժվող փչովի լաստանավակի ծածկագրով: Այն կամայական և ոչ մի ձևով չհիմնավորված որոշում է:

Ինչո՞ւ ինքնաթիռի փրկրարական սանդուղք ապրանքատեսակը դասել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8807 30 000 ծածկագրի /ինքնաթիռի մասեր/ շարքին: Այն իրենից ներկայացնում է ինքնաթիռի անբաժանելի մաս, բացվում է ինքնաթիռի վթարային վայրէջքի ժամանակ, նախատեսված է մի քանի մետր բարձրությունից մարդկանց էվակուացնելու համար: Պարունակում է ճնշման տակ գտնվող գազի պողպատե կամ ալյումինե բալոն, ինչպես նաև բոցավառվող սարքեր, որոնք պայթուցիկ են: Ավիափոխադրումների Միջազգային Ասոցիացիայի /IATA/ կողմից ինքնաթիռի փրկարարական սանդուղքը դասակարգվել է վտանգավորության ՄԱԿ-ի 9-րդ աստիճանով /UN2990/ և ապրանքի տեղափոխումը իրականացվել է վտանգավոր բեռների տեղափոխման կանոնակարգին համապատասխան: Եթե ինքնաթիռի տարբեր մասեր, օրինակ մոնիտոր, նստարան, լույսեր և այլն հնարավոր է իրենց նշանակությամբ դասակարգել համապատասխան ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ների շարքին, ապա վերոնշյալ ապրանքատեսակն իր նշանակությամբ դասակարգվում է միմիայն ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8807 30 000 ծածկագրի /ինքնաթիռի մասեր/ շարքին:

Ինչո՞ւ ինքնաթիռի փրկարարական սանդուղք ապրանքատեսակը չի կարելի դասել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8907 10 000 ծածկագրի /լողացող հարմարանքներ/ շարքին: Որովհետև ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի դասին դասվում են միայն և միմիայն ջրի վրա լողացող հարմարանքները, իսկ վերջինս չի համարվում այդպիսին: Այսինքն տեղի կունենա սխալ դասակարգում: Ինքնաթիռի փրկարարական սանդուղքը կարող է բացվել ցանկացած վթարային իրավիճակում օդում, ջրում, ցամաքում: Փչովի լաստանավը կարող է գտնվել միայն ջրում: Եթե ինքնաթիռի վթարային սանդուղքը հայտնվում է ջրի մակերևույթին, ապա այն կարող է ինքնահոսի մատնված մնալ ընդամենը մի քանի ժամ, և օդը մեջից դուրս գալուն պես, խորտակվել: Այն ոչ մի ձևով չի թիավարվում, չի լողում և առհասարակ ոչ մի գործողություն չի կատարում: Փչովի լաստանավը նախատեսված է ջրի վրա մնալու, մի կետից մյուս կետը մարդկանց տեղափոխելու համար: Եթե ինքնաթիռի փրկարարական սանդուղքը հայտնվում է ուղղահայաց դիրքում վթարային իրավիճակների ժամանակ, ապա այն մարդկանց կյանքերի փրկության նշան է, իսկ եթե փչովի լաստանավն է հայտնվում ուղղահայաց դիրքում, ապա նշան է մարդկանց խորտակման: Եվ եթե ինքնաթիռի փրկարարական սանդուղքը համարվում է ինքնաթիռի անբաժանելի մաս, ինչո՞ւ դասել փչովի լաստանավի շարքին: Բողոքաբերը գտնում է, որ եթե շարժվենք նույն տրամաբանությամբ, ապա կարող ենք ամեն ինչ խառնել և ըստ մեր հայեցողության, և ոչ ըստ ճշմարտության, իրերին և երևույթներին նոր անուններ տալ:

Ուստի, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ մաքսային ձևակերպումների մասնագետ Վարդուհի Քոլյանը խնդրում է չեղարկել ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից կազմված «վարչական տույժ նշանակելու մասին» 30.08.2023թ. թիվ 258 որոշումը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության «վարչական տույժ նշանակելու մասին» 30.08.2023թ. թիվ 258 որոշման մեջ մասնավորապես նշված է, որ ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության աշխատակիցները, ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 333-րդ և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 133-րդ հոդվածներով, իրականացրել են կամերալ մաքսային ստուգում «ԱՔԻԼԱ ՏԵԽՆԻՔՈՒ» ՍՊ ընկերության նկատմամբ և հայտնաբերել, որ «ԱՔԻԼԱ ՏԵԽՆԻՔՈՒ» ՍՊ ընկերության անվամբ 22.08.2022թ. թիվ 05100011/220822/0035135 ապրանքների հայտարարագրով ՀՀ ներմուծված «ԻՆՔՆԱԹԻՌԻ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՍԱՆԴՈՒՂՔ P/N D30665-609, S/N A5966RP» նկարագրությամբ ապրանքատեսակը հայտարարագրվել է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով:

ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության 21.06.2023թ. «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» թիվ ԱԴՈ-23-000051 որոշմամբ հաստատվել է, որ թիվ 05100011/220822/0035135 ապրանքների հայտարարագրով հայտարարագրված «ԻՆՔՆԱԹԻՌԻ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՍԱՆԴՈՒՂՔ P/N D30665-609, S/N A5966RP» նկարագրությամբ ապրանքատեսակը ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8807 30 000 0 ծածկագրի (մաքսատուրքի դրույքաչափը՝ 0%, ԱԱՀ՝ 0%) փոխարեն ենթակա է հայտարարագրման ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8907 10 000 0 ծածկագրով (մաքսատուրքի դրույքաչափը՝ 0%, ԱԱՀ՝ 20%):

ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության կողմից 30.06.2023թ. կազմվել է թիվ 0022-Ա կամերալ մաքսային ստուգման ակտն, որն ուղարկվել է ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն:

Նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ ՊԵԿ Արևմտյան մաքսատուն-վարչությունում 22.08.2022թ. թիվ 05100011/220822/0035135 ապրանքների հայտարարագիրը ներկայացրել է մաքսային ձևակերպումների մասնագետ՝ Վարդուհի Քոլյանը: 2023 թվականի հուլիսի 11-ին ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչությունում Վարդուհի Քոլյանի նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, որի մեկ օրինակն ուղարկվել է վերջինիս:

Վարչական վարույթի ընթացքում Վարդուհի Քոլյանի կողմից ներկայացվել է բացատրություն, որի համաձայն վերջինիս կողմից վիճարկվում է ապրանքի դասակարգման և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի ընտրության ճշտությունը: Ներկայացված բացատրությունը չի կարող հիմք ընդունվել, քանի, որ ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության 21.06.2023թ. «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման

վերաբերյալ» թիվ ԱԴՈ-23-000051 որոշումը և ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության 30.06.2023թ. թիվ 0022-Ա կամերալ մաքսային ստուգման ակտը վերացված չեն:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայական ստանալու պարտադիր պայմաններից է մաքսային օրենսդրությանը տիրապետելը:

Վարդուհի Քոլյանը, որպես մաքսային ձևակերպումների մասնագետ, պարտավոր էր իմանալ, որ «ԻՆՔՆԱԹԻՌԻ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՍԱՆԴՈՒՂՔ P/N D30665-609, S/N A5966RP»նկարագրությամբ ապրանքասեսեսակն իրենից ներկայացնում է «Ինքնաթիռի վթարային տարհանման փչովի սահարան/լաստանավակ»՝ նեյլոնե գործվածքից պատրաստված փչովի, սահարան/լաստանավակ օդանավի համար, որը հանդիսանում է խմբային տարհանման միջոց՝ ցամաքում և ջրում օդանավի վթարային վայրէջքի ժամանակ: Գետնին վայրէջքի դեպքում սահարան/լաստանավակն օգտագործվում է ուղևորների և անձնակազմի անդամների վթարային ելքի համար, իսկ ջրի վրա վթարային վայրէջքի դեպքում՝ որպես լողացող նավ և ենթակա է հայտարարագրման ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8907 10 000 0 ծածկագրով (մաքսատուրքի դրույքաչափը՝ 0%, ԱԱՀ՝ 20%):

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, առաջացնում է տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

Վարդուհի Քոլյանը 2023 թվականի օգոստոսի 30-ին հրավիրվել է ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն՝ իր նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով սկսված վարչական գործի քննությանը մասնակցելու համար և միաժամանակ նախազգուշացվել է, որ համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի՝ չներկայանալու դեպքում վարչական գործի քննությունը կիրականացվի իր բացակայությամբ:

Այսպիսով, գործի նյութերով պարզվել է, որ «ԱՔԻԼԱ ՏԵԽՆԻՔՍ» ՍՊ ընկերության անվամբ 22.08.2022թ. թիվ 05100011/220822/0035135 ապրանքների հայտարարագրով ՀՀ ներմուծված «ԻՆՔՆԱԹԻՌԻ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՍԱՆԴՈՒՂՔ P/N D30665-609, S/N A5966RP» նկարագրությամբ ապրանքատեսակը հայտարարագրվել է ոչ ճշգրիտ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրով Վարդուհի Քոլյանի մեղքով, ինչի հետևանքով վերոնշյալ հայտարարագրի մասով առաջացել է 2052614 ՀՀ դրամի չափով պակաս հաշվարկված մաքսային վճարներ/ԱԱՀ/, այսինքն Վարդուհի Քոլյանը թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված մաքսային կանոնների խախտում, ինչը հիմնավորվում է ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության 21.06.2023թ. «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» ԱԴՈ-23-000051 որոշմամբ, ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության 30.06.2023թ. թիվ 0022-Ա կամերալ

մաքսային ստուգման ակտով և թիվ 05100011/220822/0035135 ապրանքների հայտարարագրով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին 2-րդ պարբերությամբ, 206-րդ և 221-րդ հոդվածներով, որոշում է կայացվել Վարդուհի Սոկրատի Քոլյանին ճանաչել զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ և նրան տուգանել պակաս հաշվարկված մաքսային վճարների /ԱԱՀ-ի/ 2052614 ՀՀ դրամի 50 տոկոսի չափով՝ 1026307 ՀՀ դրամ:

3. Բողոքարկման առարկային վերաբերվող իրավական կարգավորումներ և եզրահանգումներ

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 104-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքները ենթակա են մաքսային հայտարարագրման դրանք մաքսային ընթացակարգով ձևակերպելու կամ սույն Օրենսգրքին համապատասխան սահմանված այլ դեպքերում: Մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, եթե սույն օրենսգրքով այլ բան սահմանված չէ: Մաքսային հայտարարագրումն իրականացվում է գրավոր և (կամ) էլեկտրոնային եղանակով: ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 106-րդ հոդվածով սահմանվում են ապրանքների հայտարարագրերում նշման ենթակա տեղեկությունները: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են տեղեկություններ նաև ապրանքների մասին, որոնց մեջ ի թիվս այլոց նշվում է անվանումը, նկարագրությունը, որն անհրաժեշտ է այն մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի և այլ վճարների հաշվարկման և գանձման համար, ապրանքների ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ հայտարարատուն և այլ անձինք ապրանքների դասակարգումն իրականացնում են ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան՝ մաքսային հայտարարագրման ժամանակ և այն դեպքերում, երբ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի համաձայն, մաքսային մարմին են հայտնում ապրանքի ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան: Առևտրային, տրանսպորտային (փոխադրման) և (կամ) այլ փաստաթղթերում, ինչպես նաև եզրակացություններում, տեղեկանքներում, փորձագիտական հիմնարկների կողմից տրվող փորձաքննության արձանագրություններում նշված ապրանքների ծածկագրերը պարտադիր չեն ապրանքների դասակարգման համար:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարատուն այն անձն է, որը հայտարարագրում է ապրանքներ կամ որի անունից հայտարարագրվում են ապրանքներ, իսկ 35-րդ կետի համաձայն մաքսային հայտարարագրումը մաքսային մարմնում մաքսային հայտարարագրի միջոցով ապրանքների վերաբերյալ տեղեկությունների, ընտրված մաքսային ընթացակարգի վերաբերյալ և (կամ) ապրանքների բացթողման համար անհրաժեշտ այլ տեղեկությունների հայտագրումն է:

Օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային գործառնություններ իրականացնելիս մաքսային ներկայացուցիչն ունի նույն իրավունքները, որոնք ունի այն անձը, որը լիազորում է նրան ներկայացնելու իր շահերը մաքսային մարմինների հետ փոխհարաբերություններում: 405-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մաքսային ներկայացուցիչը պարտավոր է կատարել սույն Օրենսգրքով սահմանված և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ պարտականություններ:

Օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված են հայտարարատուի պարտականությունները, այն է՝ կատարել ապրանքների մաքսային հայտարարագրում, մաքսային մարմին ներկայացնել մաքսային հայտարարագրում հայտարարագրված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր, ներկայացնել հայտարարագրվող ապրանքները և վճարել մաքսային վճարները, իսկ 3-րդ կետի համաձայն հայտարարատուն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտականությունները չկատարելու, մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ հայտարարագրելու, ինչպես նաև մաքսային ներկայացուցչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու համար:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայական ստանալու պարտադիր պայմաններից է մաքսային օրենսդրությանը տիրապետելը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն: Ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, առաջացնում է տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

Ելնելով վերը նշված իրավանորմերի դրույթներից, հիմք ընդունելով սույն որոշման 2-րդ կետում բերված փաստական տվյալները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վարդուհի Քոլյանի

արարքում առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված մաքսային կանոնների խախտում և ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության «վարչական տույժ նշանակելու մասին» 30.08.2023թ. թիվ 258 որոշումը հիմնավոր է և իրավաչափ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության «վարչական տույժ նշանակելու մասին» 30.08.2023թ. թիվ 258 որոշման դեմ մաքսային ձևակերպումների մասնագետ Վարդուհի Քոլյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

9/15/2023

X

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Signed by: TAMAZYAN KAREN 2612840184

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ